ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԸ

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Կարինե Բակունց

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Սյունիքի մարզի Վերիշենի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
2. ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ…… 4
3. ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԸ…….…… 5
2. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……...……..12
3. ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...……13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում և ուսումնաօժանդակ գրականության մեջ տեղ են գտել ժողովրդական հեքիաթները, որոնք իրենց բովանդակությամբ ու ձևով, կրթական ու դաստիարակչական խնդիրներով տարբեր են:

Գեղարվեստական գրականության ճանաչողական արժեքը մեծ է տարրական դասարանների աշակերտների համար: Պետք է հասնել նրան, որ նյութի ամփոփմանը երեխաները կարողանան տրամաբանական ճիշտ եզրակացություններ անել, պարզ, հստակ ու հակիրճ կերպով բնորոշել տվյալ նյութի ճանաչողական արժեքը, նրանից ստացած աշխարհաճանաչողական տեղեկությունները:

Չափազանց մեծ է հեքիաթների դաստիարակչական նշանակությունը: Դասագրքերում զետեղված հեքիաթներն օգնում են դաստիարակելու հոգևոր բազմակողմանի հետաքրքրություններ և հարուստ ներաշխարհ ունեցող մարդիկ, որոնց մեջ զարգացած են և՛ միտքը, և՛ զգացմունքը, որոնք ընդունակ են ճիշտ հասկանալու կյանքի պահանջները՝ դրականը, գեղեցիկն ու առաքինին, և բացասականը տգեղն ու անարդարը:

Հետևաբար, **ավարտական հետազոտական աշխատանքի թեման արդիական է**, քանի որ հեքիաթի ուսուցումը կարևոր է կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման գործում, նրա անձի տարբեր կողմերի ձևավորման և զարգացման համար:

Ավարտական հետազոտական աշխատանքի նպատակը տարրական դասարաններում հեքիաթի դասավանդման մեթոդիկայի առանձնահատկությունների վերհանումն է, ուսուցման գործընթացում հեքիաթի ուսուցմանը միտված ինքնատիպ համակարգի վերլուծությունն ու մշակումը:

Հետազոտական աշխատանքը նպատակադրված է թիրախ խմբի համար, այն է՝ հանրակրթական հիմնական դպրոցում դասավանդողները: Աշխատանքում ներկայացված մեր սեփական փորձը կնպաստի տարրական դասարաններում դասավանդողների փորձի փոխանակմանը, առկա մեթոդական համակարգի լավարկմանը:

ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին և ամենատարածված ստեղծագործություններից են, որոնք ծագել են մարդկության ստեղծման վաղ շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել ու հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ և խոր լավատեսությամբ:

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության նմուշ է՝ արձակ բանավոր ստեղծագործություն: Բանահյուսության մյուս նմուշներից հեքիաթը տարբերվում է նրանով, որ հիմնականում ոչ իրական, հրաշապատում բնույթ ունի: Կյանքում չիրականացած իր ցանկությունները ժողովուրդը մարմնավորել է հեքիաթների մեջ: Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ կենդանական, հրաշապատում, իրապատում: Տարրական դասարաններում նախընտրելի են կենդանական և իրապատում հեքիաթները:

Կենդանական հեքիաթներն առաջացել են հնադարում, երբ մարդը նոր էր սկսում կենդանիներին ընտելացնել, դրա համար էլ հեքիաթներում գործող անձերը հիմնականում կենդանիներ են: Կենդանական հեքիաթներից հետագայում առաջացել են առակները, որոնցումնույնպես գործող անձերը մեծ մասամբ կենդանիներն են: Հեքիաթներն ըստ թեմատիկայի լինում են կենցաղային, հերոսական, սոցիալական: Այդ բոլորի հիմքում կյանքն է իր բարդ ու բազմապիսի փոփոխություններով: Երբեմն դրանցից շատերն ավելի ճշմարտապատում և իրական են, քան սովորական իրապատում հեքիաթները: Այսպիսի հեքիաթներում հեքիաթայինը ոչ այնքան փաստերն են՝ գործողություն և գործող անձինք, որքան գործողությունների կամ սյուժետային գծի լուծումները, որոնք հատուկ են հեքիաթներին, շատ պարզ ու դյուրին են, որպիսիք իրականության մեջչենլինում: Հեքիաթն իր երևակայական հերոսներով զարմանահրաշ թագավորներով, կախարդներով, փերիներով, հսկաներով ու թզուկներով, խոսող կենդանիներով ու բույսերով շատ մոտ է երեխաների երևակայական աշխարհին: Այդ է պատճառը, որ նրանք մեծ սիրով կարդում և լսում, վերլուծում են ու ներկայացնում հեքիաթները:

Հեքիաթներում գովերգվում են մարդկային խելքն ու հնարամտությունը, բարությունը, աշխատասիրությունը: Հեքիաթները, լինելով գրավիչ ու գունեղ, հեշտությամբ են տպավորվում: Այս տարիքի (տարրական դասարանների) աշակերտներն ավելի շուտ են հիշում հեքիաթի, քան որևէ պատմվածքի բովանդակությունը: Մեծ է հեքիաթի կրթադաստիարակչական նշանակությունը: Ղ. Աղայանը ժողովրդական հեքիաթները համեմատել է մոր կաթի հետ. «Հեքիաթը բարոյական ու մտավոր զարգացման համար շատ նման է մայրական կաթին»: Ինչպես մայրական կաթն է սնուցում ու մեծացնում որդուն, այնպես էլ ժողովրդական հեքիաթները սնունդ են տալիս աշակերտների մտավոր ու բարոյական զարգացմանը:

Հեքիաթը ստեղծում է մի ներդաշնակ ամբողջություն, որն իր գեղեցիկ մանրամասնություններով, ժողովրդական բառերով, դարձվածքներով և լեզվամտածողությամբ հեշտությամբ տպավորվում է երեխաների հիշողության մեջ: Չկա մի մարդ, որ հեքիաթներ չսիրի կամ մանկության տարիներին չհրապուրվի դրանցով: Ուշինսկին վստահ պնդում է, թե ժողովրդական հեքիաթները պատմվածքներից ավելի բարձր կարելի է դասել:

Հեքիաթներում իրականն ու երևակայականը հանդես են գալիս միաձուլված, և այդ նրա ժանրային առանձնահատկություններից մեկն է:

ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԸ

Հեքիաթի դասավանդման աշխատանքն ունի երկու փուլ.

ա. բովանդակության կամ դիպաշարի հաղորդում

բ. հեքիաթային երևակայական կողմի բացահայտում:

Երկու փուլերն էլ խիստ կարևոր են, անհրաժեշտ են նյութի յուրացման և նրանից բխող կրթական ու դաստիարակչական նպատակների իրականացման համար և երբեք չեն կարող փոխարինել միմյանց: Երեխաների առաջ պետք է բացել հեքիաթային դռնակը, ցույց տալ նրանում իրականն ու անիրականը:

Հեքիաթի շուրջ տարվող աշխատանքների ընթացքում պիտի կարևորել հերոսների այն արարքները, որոնցշուրջ զարգանում են հեքիաթի իրադարձությունները: Դրանց միջոցով են որոշվում գլխավոր հերոսների արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր միտքը:

Մայրենիի ուսուցման գործընթացի կարևոր խնդիրներից մեկը աշակերտների խոսքի զարգացում է, նորը ստեղծելու կարողությունը: Այն նպաստում է ստեղծագործական իրադրության ապահովմանը:

Հեքիաթի ուսուցման իմ փորձը:

Աշակերտներին հաղորդում եմ, որ կկարդանք «Մայրենի -3» (հեղ.՝ Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն.) դասագրքում զետեղված հնդկական ժողովրդական «Յոթ փայլուն աստղեր» հեքիաթը: Յուրաքանչյուր դաս մի ստեղծագործություն է և յուրովիմոտեցում է պահանջում: Դասի յուրաքանչյուր րոպենպետք է արդյունավետ օգտագործել: Մակարենկոյի խոսքերով «Դաստիարակության համար ոչ թե շատ ժամանակ է պետք, այլ քիչ ժամանակի խելացի օգտագործում: Մի դասի րոպեների ընթացքում պետք է լուծվեն ուսուցման ու դաստիարակության բազմաթիվ խնդիրներ»[1]:

Դասի պլան

Դասի թեման՝ «Յոթ փայլուն աստղերը» հեքիաթը:

Դասի նպատակները.

1. Ակադեմիական

[1] Ա. Մակարենկո «Մանկավարժական պոեմ» 3- րդ մաս, Երևան, 1947, էջ 223

ա. Գիտելիք հեքիաթի որպես գեղարվեստական երևակայության զարգացման միջոցի:

բ. Բառապաշարի հարստացում:

գ. Բնագիրը արահատիչ ընթերցելու ունակության զարգացում, սեփական խոսքում բառի ճիշտ, դիպուկ ընտրություն կատարելու՝ ստեղծագործական կարողությունների ձևավորում:

դ. Գեղագիտական ճաշակի, ոչ ստանդարտ և պատկերային մտածողության ձևավորում:

2. Սոցիալական

Հեքիաթի ճանաչողական, դաստիարակչական նշանակությունը, դաստիարակել հոգատարություն, բարություն, հարազատին նվիրվելուձգտում, տոկունություն, հավատ և հավատալու ձգտում:

Մեթոդները Դասը ներկայացվում է ԽԻԿ համակարգով Խթանման փուլ- «Հինգրոպեանոց շարադրանք»

Իմաստի ընկալման փուլ- «Կանխագուշակության աղյուսակ»

Կշռադատման փուլ-«Հարցուպատասխանի աղյուսակ».

Անդրադարձ

Տնային աշխատանքի հանձնարարում

Խթանման փուլում, օգտագործելով «Հիգրոպեանոց շարադրանք» մեթոդը, ստեղծում եմ մտավոր նախավարժանքի հնարավորություն: Գրատախտակին գրում եմ հեքիաթից հանված չորս բանալի բառ և բառակապակցություն հիվանդ մայր, կուժ, մուրացկան, յոթ փայլուն աստղեր:

Աշակերտներին տրամադրում եմ 5 րոպե, որպեսզի նրանք այդ բառերն օգտագործելով, յուրաքանչյուրնիրմտավոր կարողությունների սահմաններում պատկերացնի և թղթին հանձնի իրմտքերը: Առաջին հինգ հոգին իրենց ցանկությամբ շարադրանքները կարդում են:

Իմաստի ընկալման փուլում աշակերտներին բաժանում եմ կանխագուշակության աղյուսակի դատարկ ձևաթուղթ, որով պետք է աշխատեն.

Կանխագուշակության աղյուսակի ձևաչափ

	Առաջին մաս	
Քո կարծիքով ի՞նչ է լինելու:	Ի՞նչ փաստեր կան:	Ի՞նչ եղավ:
		_____
	Երկրորդ մաս	
Քո կարծիքով ի՞նչ է լինելու:	Ի՞նչ փաստեր կան:	Ի՞նչ եղավ:
	Երրորդ մաս	
Քո կարծիքով ի՞նչ է լինելու:	Ի՞նչ փաստեր կան:	Ի՞նչ եղավ:

Տեքստը նախօրոք բաժանում եմ տրամաբանական մասերի (այս հեքիաթի պարագայում 3 մասի), որոնք պետք է կարդալ դադարներով: Երրորդ դասարանում կարելի է բավավարարվել ընդամենը երկու դադարով: Պետք է ուշադիր հետևել, որ յուրաքանչյուր աշակերտ մասնակցի կանխագուշակման գործընթացին: Օգնում եմ աշակերտներին՝ ձեռք բերելու ինքնավստահություն, այսինքն՝ շրջապատի հետ հարաբերությունները կառուցել այնպես, որ առանց երկար մտածելու արտահայտեն մտքեր: Աշակերտի կողմից մտածված յուրաքանչյուր դատողության համար պետք է քաջալերել նրան:

Պետք է խթանել աշակերտների երևակայությունը: Կրտսեր դպրոցականի երևակայությունն անսահման է: Այն ստեղծագործական մտածողության հիմքն է: Ուստի պետք է զարգացնել այն:

Արտահայտիչ ընթերցում եմ հեքիաթի առաջին մասը, (մինչև ...«Երկար փնտրեց խեղճ աղջիկը, բայց այդպես էլ ոչ մի կաթիլջուր չգտավ»)[2]:

Հրահանգից հետո աշակերտները լրացնում են աղյուսակի առաջին մասիառաջին «Քո կարծիքով ի՞նչ է լինելու» սյունակը:

Աշակերտներից մեկը կարող է գրել, օր.՝ Աղջիկը կգնա ջուր բերելու:

Երկրորդ «Ի՞նչ փաստեր կան» սյունակը.օր.՝ «Մայրը հիվանդ էր և ջուր էր ուզում: Նույն ձևով անցնում ենք երկրորդ մասի ընթերցմանը: Նորից ենք դադար առնում, օր.՝ (Աշան գլխի ընկավ, որ շունը շատ ծարավ էր, և մի կում ջուր տվեց նրան):

[2]Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան «Մայրենի» Երևան 2014, «Էդիթ Պրինտ», էջ 57

Աշակերտները լրացնում են առաջին մասի երրորդ սյունակը. Ի՞նչ եղավ հարցին պատասխանում են. օր.՝ «Երաշտ եղավ, գետերը ցամաքեցին: Աշայի մայրը հիվանդացավ: Աշան գնաց ջուր գտնելու»: Ապա լրացնում են երկրորդ մասի առաջին սյունակը: Օր.՝ «Շատ փնտրեց, բայց չգտավ, գնաց, որ ջուր գտնի»:

Երկրորդ դադարից հետո լրացնում են նախ երկրորդ մասի երրորդ սյունակը, ապա երրորդ մասի առաջին երկուսը: Ուղղորդելու համար օգտվում եմ նաև դասագրքի նկարազարդ պատկերից:

Ըստ նկարի ճանապարհին հանդիպած շունը ջուր էր խնդրում: Շանը ջուր տվեց և յոթ ադամանդ ստացավ, որոնք փայլուն աստղեր դարձան, երբ մուրացկանին ջուր տվեց: Ամբողջ ստեղծագործությունը կարդալուց հետո աշակերտները լրացնում են երրորդ մասի երրորդ «Ի՞նչ եղավ» սյունակը:

Օր.՝ Աշան կուժը տվեց մուրացկանին, անմիջապես յոթ ադամանդներ հայտնվեցին կժի մեջ, որոնք էլ երկինք բարձրացան ու դարձան յոթ փայլուն աստղեր: «Կանխագուշակության աղյուսակ» մեթոդը ցանկալի է օգտագործել փոքրածավալ ստեղծագործություններ ուսուցանելու ժամանակ: Առաջին սյունակով զարգացնում ենք աշակերտների ստեղծագործական կարողությունները: Մենք ստանում ենք աշակերտների թվով (մոտ 18) նոր ստեղծագործություններ: Երկրորդ սյունակով զարգացնում ենք փաստարկելու, եզրահանգելու, հիմնավորելու կարողությունները: Երրորդ սյունակի միջոցով զարգացնում ենքտեքստը աշակերտների բառերով վերարտադրելու կարողությունը:

Մենք բացահայտում ենք նրանց երևակայությունը: Ընթերցանության ուսուցման այսօր ներկայացվող պահանջներից մեկն էլ ընթերցված նյութից անհրաժեշտ փաստեր ուտեղեկություններ քաղելու կարողության ձևավորումն է: Եթե դասի սկզբին մենք տվել ենք 4 բառ և բառակապակցություն, ապա երրորդ մասի երրորդ սյունակի «Ի՞նչ եղավ»-ը լրացնելիս աշակերտները ևս մեկ անգամ վերընթերցում են համապատասխան հատվածը, որն էլ իրհերթին նպաստում է վարժ և արագ ընթերցանությանը, տեքստում արագ կողմնորոշվելու կարողությանը:

Կշռադատման փուլում հեքիաթը ամփոփում ենք «Հարց ու պատասխանի» մեթոդով: Աշակերտներին ուղղում եմ «Ինչպիսի՞նն է մեր հերոսուհին» հարցը և

գրատախտակին գրում նրանցից ստացված պատասխան-բնութագրիչները: Օր.՝ բարի, գթասիրտ, աշխատասեր, հոգատար, մարդամոտ, խելացի, պարտաճանաչ և այլն:

Հեքիաթի բուն բովանդակությունը միասին վերլուծելուց հետո, մեկնաբանում ենք, որ հեքիաթի հերսուհին շատ բարի է, ջերմորեն սիրում է մորը: Երբ մայրը հանկարծակի հիվանդացավ և շարունակ ջուր էր ուզում, աղջիկը վազեց ջուր ճարելու: Երկար փնտրեց խեղճ աղջիկը, բայց այդպես էլ ոչ մի կաթիլ ջուր չգտավ: Երկար քայլելուց հոգնեց, ինքն էլ չիմացավ, թե ինչպեսքնեց: Արթնացավ Աշան, շատ զարմացավ՝ կողքին մի կուժլիքըջուրտեսնելով: Փորձեց մի կում խմել, բայց հիշեց և վազեց մորմոտ: Վազելիս չնկատեց ճանապարհին պառկած շանը: Շունը ջուր խնդրեց և աղջիկը կատարեց նրա կամքը և կուժը տեղնուտեղը արծաթ դարձավ: Հեքիաթը տրամաբանական լուծում ունի. լավությունն անպատասխան չի մնում:

Մայրը հրաժարվեց առաջինը ջուր խմել.

-Աղջի՛կս,նախ դու խմիր, գիտեմ, շատ ծարավ ես:

Ասելուն պես արծաթե կուժը ոսկի դարձավ: Աշակերտները հիշում են հայտնի խոսքը.«Ջուրը փոքրին, խոսքը մեծին»: Աշան փորձեց մի կում անել, լսվեց մուրացկանի ձայնը, որը ջուր էր խնդրում: Այս անգամ լավությունը բազմապատկվեց. յոթ աղամանդներ հայտնվեցին կժի մեջ, սառը ջուրն սկսեց աղբյուրի պես հորդել: Աշակերտները եզրակացնում են, որ բարությունն է փրկում աշխարհը... Հեքիաթի բուն բովանդակությունը և բնագիրը լավ ուսումնասիրելուց, անհրաժեշտ բացատրություններ և մեկնաբանություններ տալուց հետո անդրադարձ եմ կատարում. «-Հետաքրքի՞ր դաս էր այսօր»:

Լսում եմ նրանց պատասխանները այսօրվա դասի մասին և ոգևորում նրանց, որ նման հետաքրքիր դասեր էլի կունենանք: Արձագանքում եմ ամեն մի աշակերտի առաջադրած պատասխանին: Անհրաժեշտ է խրախուսել աշակերտի սեփական տեսակետները հիմնավորելու միտումը: Քննարկելով այն, ինչլսել են, աշակերտներին հնարավորություն է տրվում մտածել լսածի սեփական մեկնաբանությունը և ի նչ ազդեցություն ունեցավ հեքիաթը: Հանձնարարում եմ տանը գրել փոքրիկ շարադրություն «Եթե ես լինեի Աշան» վերնագրով:

Ստեղծագործական աշխատանքի այս տեսակը՝ շարադրությունը գրելու գործընթացը նաև դաստիարակության արդյունավետ միջոց է. աշակերտին սովորեցնում է մտածել և

գնահատել տեսածը, լսածը, զարգացնում է խոսքիմեջ սեփականը, ինքնուրույնը ներդնելու ձգտում:

Անպայման կստուգեմ շարադրությունները և աշակերտների դատողությունները կփորձեմ օգտագործել հաջորդ օրվա դասը պլանավորելիս: Կերպարվեստի դասին (որընույնպես ես եմ դասավանդում)մենք միասին կնկարենք հեքիաթի մեզ դուր եկած հերոսներին և դրվագները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով թեմայի վերաբերյալ ուսումնասիրած մասնագիտական գրականության, դպրոցում անցկացրած մանկավարժական պրակտիկայի և դպրոցում աշխատելու արդյունքներից՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- Հեքիաթի ուսումնասիրումը նպաստում է կրտսեր դպրոցականի երևակայության խթանմանը, հետաքրքրասիրության ձևավորմանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը և ընթերցասիրության մշակմանը, եթե գործընթացն իրականացվում է նպատակադրված մեթոդական շղթայով:
- Հեքիաթի ուսումնասիրման միջոցով աշակերտների բառապաշարը, կապակցված խոսքը և երևակայությունը կզարգանան, եթե ուսումնասիրման գործընթացն իրականացվի համագործակցային ճանապարհով՝ կիրառելով փոխգործուն մեթոդներ. «Քառաբաժան», «Մտագրոհ», «Ուսուցչի խոսք», «Վեննի դիագրամ» և այլն:
- Աշակերտների երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստում են նաև հեքիաթների հերոսներին նկարելը, նրանց գործունեությունը այդ կերպ ներկայացնելը և իրենց նկարածը վերլուծելը ու դատողական խոսք կառուցելը:
- Մեր կատարած հետազոտական աշխատանքը ևս հաստատեց հեքիաթի ուսուցման կարևորությունը կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման գործում, նրա անձի տարբեր կողմերի ձևավորման և զարգացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուրջինյան Դ, Հեքեքյան Ն. «Մայրենի-3», Երևան, «Էդիթ Պրինտ», 2014թ., էջ՝ 54-58
2. Գյուրջինյան Դ, Հեքեքյան Ն. «Մայրենի-3» Մեթոդական ուղեցույց, Երևան, «Էդիթ Պրինտ», 2008թ., էջ՝ 26-27
3. Ա. Մակարենկո, «Մանկավարժական պոեմ, երրորդ մաս», Երևան, 1947, էջ 223